# 2025-2026 ուս. տարվա Հանրային առողջության «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագրի շրջանավարտների ավարտական ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ հարցումների արդյունքների ամփոփում

ԵՊԲՀ Կրթության որակի գնահատման

և ապահովման կենտրոն

**Հարցման մասնակցություն՝ 24 շրջանավարտ (80%)**

Սույն վերլուծությունը ներկայացնում է 2025-2026 ուսումնական տարվա Հանրային առողջության «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտների ավարտական ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ իրականացված հարցման արդյունքները: Հարցմանը մասնակցել է ծրագրի շրջանավարտների 80%-ը (24 շրջանավարտ), ինչը ապահովում է տվյալների ներկայացուցչականություն և հնարավորություն տալիս գնահատել ուսանողների փորձառությունը՝ ինչպես ավարտական թեզի պատրաստման և պաշտպանության գործընթացում, այնպես էլ ուսումնառության ողջ ընթացքում ստացված գիտելիքների և հմտությունների տեսանկյունից:

Վերլուծության նպատակն է բացահայտել կրթական ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, գնահատել վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը, ինչպես նաև հավաքագրել շրջանավարտների առաջարկությունները՝ ծրագրի հետագա բարելավման համար: Հատուկ ուշադրություն է դարձվում ինչպես

կրթության բովանդակային արդյունավետությանը, այնպես էլ կազմակերպչական և մեթոդական ասպեկտներին, ներառյալ դասավանդման ձևաչափերը, գործնական բաղադրիչի ապահովումը և գնահատման գործընթացի թափանցիկությունը:

1. **Նշեք կրթական ծրագիրը**

   Առողջապահության կազմակերպում և կառավարում 23 (95.8%)

   Համաճարակաբանություն 1 (4.2%)

2. **Որքանո՞վ էին օբյեկտիվ հանձնաժողովները թեզի պաշտպանության ժամանակ** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ արտահայտված ոչ օբյեկտիվ մոտեցում, 5-ը՝ խիստ օբյեկտիվ մոտեցում)




3. **Ինչպես կգնահատեք թեզի ղեկավարի աջակցությունը** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ արտահայտված ոչ օբյեկտիվ մոտեցում, 5-ը՝ խիստ օբյեկտիվ մոտեցում)



4. **Ավարտական թեզի պաշտպանությանը նախապատրաստվել ու ընթացքում**

| | | Այո | Ոչ | Դժվարանում եմ պատասխանել |
|---|---|---|---|---|
| Ա | Դուք ունեցել եք բավարար ժամանակ | **50%** | **37.5%** | **12.5%** |
| Բ | Դուք ունեցել եք բավարար գրականություն | **100%** | **0** | **0** |
| Գ | Ընտրված թեման բխում էր ձեր հետաքրքրություններից | **100%** | **0** | **0** |

5. **Թեզի պաշտպանության ընթացքում սենյակում ձևավորված միջավայրը որքանո՞վ էր նպաստում Ձեր ունեցած գիտելիքների և կարողությունների լիարժեք դրսևորմանը** (գնահատեք 1-5 բալային սանդղակով,որտեղ 1-ը՝ Ձեզ զգում էիք կաշկանդված,5-ը՝ ստեղծված էր անկաշկանդ միջավայր,որը լիովին




նպաստում էր Ձեր գիտելիքների և կարողությունների դրսևորմանը)

6. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած տեսական գիտելիքներով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




7. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած գործնական հմտություններով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




8. **Նշեք մինչև 3 առարկա, որոնց մասնաբաժնի հնարավոր մեծացումը, ըստ Ձեզ, կարող է նպաստել կրթական ծրագրի վերջնարդյունքների ավելի լիարժեք ձեռքբերմանը**

1. Առաջնորդություն, Որակ, առողջապահության կառավարում
2. Կենսավիճակագրություն, Համաճարակաբանություն, Բուժհաստատության կառավարում
3. Որակ, կառավարում առաջնորդություն
4. Առաջնորդություն, առողջապահության կառավարում
5. Բուժօգնության որակի կառավարում, Խնդիրների լուծման հարացույց, քանակական հետազոտության մեթոդներ
6. Առողջապահության կառավարում (Մարտին Ալեքսանյան)

7. Առողջապահության կառավարում, առաջնորդություն
8. Առողջապահության կառավարում, առաջնորդություն
9. Բուժհաստատությունների կառավարում
10. Բուժհաստկառավարում, Կազմակերպական վարքագիծ, Թվային առողջապահություն
11. Վիճակագրություն.
12. Կենսավիճակագրություն
13. Առողջապահության կազմակերպում, Շանթի առարկան, Լուսինե Քոչարյանի առարկան
14. Քանակական և որակական հետազոտություններ
15. 1.Թվային առողջապահություն 2. Բուժհաստատության կառավարում

**9. Նշեք մինչև 3 առարկա, որոնց մասնաբաժնի ինարավոր նվազեցումը, ըստ Ձեզ, կարող է իրականացվել առանց կրթական ծրագրի վերջնարդյունքների խաթարման**

1. Բիոստատիստիկա
2. Թվային առողջապահություն, Բիոէթիկա, Ապահովագրություն
3. Կազմակերպական վարքագիծ, առ.կրթում և քարոզում
4. Կենսավիճակագրություն
5. Ծրագրերի պլանավորում և իրագործում
6. Կենսավիճակագրություն, առողջապահության կազմակերպում, հանել առողջապահութան քաղաքականությունը
7. Առողջապահական քաղաքականություն
8. Ինֆեկցիոն համաճարակաբանություն
9. Ապահովագրություն, Էթիկա Արտակարգ իրավիճակներ
10. Կառավարում, որակի թեման
11. Առողջապահության պլանավորում և ծրագրավորում
12. Առողջապահության կազմակերպում

**10. Ըստ Ձեզ, կրթական ծրագիրն ավարտելուց հետո, որքանով եք տիրապետում ներքոնշյալ վերջնարդյունքներին** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ չեք տիրապետում, 5-ը՝ լիովին տիրապետում եք)

| Վերջնարդյունք | Գնահատական (*միջինացված*) |
|---|---|

| | |
|---|---|
| 1. Կիրառել համաճարակաբանական, վիճակագրական և վերլուծական մեթոդների լայն շրջանակ՝ գնահատելու բնակչության առողջական կարիքները, հետևելու հանրային առողջության միտումներին, ինչպես նաև գնահատելու առողջապահական համակարգերի ու ծառայությունների արդյունավետությունն ու ազդեցությունը, ներառյալ Հայաստանի պայմաններում: | 4.33 |
| 2. Մշակել ,իրականացնել և գնահատել հանրային առողջության ծրագրեր և առողջապահական միջամտություններ,հիմնված բնակչության կարիքների,համատեքստային ապացույցների և հանրային առողջության առաջնահերթությունների վրա՝ հաշվի առնելով ռեսուրսների ու ենթակառուցվածքների սահմանափակումները,որոնք բնորոշ են Հայաստանին և համանման միջավայրերին: | 4.33 |
| 3. Քննադատական կերպով վերլուծել առողջապահական համակարգը,կառավարումը, քաղաքականությունները և ֆինանսավորման մեխանիզմները,ներառյալ Հայաստանի առողջապահական բարեփոխումները և ազգային ծրագրերը,և առաջարկել ապացույցների վրա հիմնված լուծումներ՝ արդարության, արդյունավետության և մատչելիության բարելավման համար: | 4.25 |
| 4. Ցուցաբերել առաջնորդություն,հաղորդակցման և ռազմավարական կառավարման հմտություններ, որոնք կիրառելի են միջմասնագիտական թիմերում և միջոլորտային համագործակցությունների շրջանակում՝ ինչպես Հայաստանի,այնպես էլ միջազգային պրակտիկայում: | 4.25 |
| 5. Արդյունավետ հաղորդակցել հանրային առողջության բարդ հարցերը տարբեր թիրախային լսարանների հետ,այդ թվում՝ քաղաքականություն մշակողների,մասնագիտական համայնքի և հանրային շահառուների հետ՝ օգտագործելով համապատասխան հաղորդակցական միջոցներ և ձևաչափեր: | 4.13 |
| 6. Ինտեգրել բարոյագիտության,մարդու իրավունքների և սոցիալական արդարության սկզբունքները հանրային առողջության քաղաքականությունների վերլուծության, ծրագրային լուծումների մշակման և ծառայությունների իրականացման մեջ՝ կենտրոնանալով առողջական անհավասարությունների նվազեցման վրա Հայաստանում: | 4.29 |
| 7. Իրականացնել անկախ հանրային առողջության հետազոտություն կամ կիրառական դաշտային ծրագիր,օգտագործելով քանակական,որակական կամ խառը մեթոդաբանություններ՝ պահպանելով հետազոտական էթիկայի և ազգային առաջնահերթությունների պահանջները: | 4.29 |

| | | |
|---|---|---|
| 8. | Աշխատել միջոլորտային համագործակցության շրջանակում, դիմակայել ու բարդ հանրային առողջության խնդիրներին, ներառյալ թվային առողջության գործիքների ինտեգրումը, համայնքային հիմնված մոտեցումները, հսկողության համակարգերը և համադրված արձագանքները զոոնոտիկ և բնապահպանական առողջական սպառնալիքներին: | 4.29 |
| 9. | Խթանել հանրային առողջապահական գրագիտությունը և նվազեցնել ապատեղեկատվությունը՝ կիրառելով թվային և միջանձնային հաղորդակցման ռազմավարություններ: | 4.42 |
| 10. | Քննադատական կերպով վերլուծել ազգային և գլոբալ առողջապահական մարտահրավերները, ներառյալ հետկոնֆլիկտային վերականգնումը, կլիմայական ռիսկերը և կադրային պակասը Հայաստանում, և ձևակերպել համատեքստին համապատասխանող, կայուն և գործնական լուծումներ: | 4.29 |

**11. Խնդրում ենք նշել ուսումնառության հետ կապված հիմնական խնդիրները և/կամ դրանց լուծմանն ուղղված Ձեր առաջարկները**

1. Գործնականը չկար, եթե լիներ լավ կլիներ
2. Հավասար վերաբերվեք բոլոր ուսանողներին
3. Ցանկալի կլիներ ունենալ հիմնական լսարան հագեցված համապատասխան տեխնոլոգիաներով, կրճատել քննությունների քանակը որը հնարավորություն կտա ուրբաթ օրը նույնպես տեսական կամ գործնական նոր նյութեր քննարկել, վերամշակել ծրագիրը, քանի որ որոշ առարկաներ գրեթե նույն բանն են քննարկում
4. Շնորհակալ եմ տված գիտելիքի և դասախոսների այդքան ջերմ բերաբերմունքի համար: Միանշանակ խմդիրներ եղել են որոշ առարկաների շաբաթական քիչ ժամեր տրամադրելու և հակառակը՝ որոշ առարկաների առավել ժամանակ հատկացնելը: Չնայած նմանատիպ խնդիրների, եթե հնարավոր լիներ սովորել նորից կընտրեի ԵՊԲՀ-ը:
5. Ընթացիկ հետադարձ կապ տվել ենք, առարկաառ առարկաբարելավումների տեղեր կան և ընդհանուր ծրագրում ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՖԻԼՏՐՈՒՄ՝ խուսափելու համար կրկնվող կամ ավելորդ տեսական ինֆորմատիվ հոսքից

6. Քննություններից հետո ցանկալի է ուսանողը տեղեկանա իր սխալներին
7. Խնդիրներ չեն եղել
8. Խնդիրներ չկան բացառությամբ երեք շաբաթանոց առարկաներին, որոնք կարելի էր հանգիստ կազմակերպել երկու շաբաթում, հիմնական շեշտը պիտի դրվեր վիճակագրության ..ժամանակ շատ քիչ էր թեզի վիճակագրություն անելու համար, խնդրում ենք շատացել ժամանակը
9. Ավելի պրակտիկ դասընթացները ավելացնել, իսկ մեխանիկականը, որը ԱԻ-ը անում է, պակասեցնել:

**Ամփոփում**

Վերլուծության արդյունքները վկայում են, որ կրթական ծրագիրը ընդհանուր առմամբ ապահովում է բարձր մակարդակի տեսական գիտելիքներ և ձևավորում է հանրային առողջության ոլորտում անհրաժեշտ մասնագիտական կարողություններ: Շրջանավարտների մեծ մասը դրական է գնահատել թե՛ թեզի պաշտպանության գործընթացը, թե՛ գիտելիքների և հմտությունների կիրառման հնարավորությունները, իսկ վերջնարդյունքների միջին գնահատականները (4.13–4.42 միջակայքում) փաստում են ծրագրի արդյունավետության մասին

Միաժամանակ, վերլուծությունը բացահայտում է մի շարք բարելավման կարիք ունեցող ուղղություններ: Հատկապես ընդգծվում է գործնական բաղադրիչի ուժեղացման անհրաժեշտությունը, որոշ առարկաների բովանդակության վերանայումը՝ կրկնություններից խուսափելու նպատակով, ինչպես նաև ուսումնական բեռնվածության և առարկաների ժամաբաշխման օպտիմալացումը:

Շրջանավարտները կարևորում են նաև վիճակագրական և կառավարման հմտությունների խորացումը, ժամանակակից թվային լուծումների կիրառումը և հետադարձ կապի համակարգի կատարելագործումը:

Այսպիսով, կրթական ծրագիրը ունի կայուն հիմք և համապատասխանում է մասնագիտական պահանջներին, սակայն դրա շարունակական զարգացումը պահանջում է ավելի պրակտիկ ուղղվածություն, ուսանողակենտրոն մոտեցումների ուժեղացում և բովանդակային մշտադիտարկում՝ ապահովելու շրջանավարտների մրցունակությունն ու մասնագիտական պատրաստվածությունը ինչպես Յայաստանի, այնպես էլ միջազգային աշխատաշուկայում: